

ուս ծախսել է 261 ր. 30 կ.: Նոյն վարժարանի անցեալ տարիների հաշիւները առ ձեռն չունենալով, նոցա մասին ոչինչ ասել չենք կարող, միայն թպու ենք տալիս մեզ նկատել, որ եթէ յարգոյ Հոգաբար ձութիւնը այսուհետեւ եւս իւր գործը այսպէս վարելու լինի, մի քանի տարրուց յետոյ ամբողջ մայր գումարը բոլորովին կողառի եւ հետեւարար վարժարանի փակման դըժբաղդութեանը կը վիճակի ի դաւ ամենայն Անդամոց եւ Անդամու հետաց Ընկերութեան վարժարանի եւ ամենայն աղգայնոց:

Սորա մասին Հոգալու հրաւիրումենք յարգոյ Հոգաբարձուաց ուշագրութիւնը:

— — — — —

### ՀԱՅ ԳԵՂՋԱՌԻՀԻ.

Զով Մայիսն անցաւ, զերմ Յունիսն եկաւ,

Մեր հայ գիւղացու արտերը հասաւ,

Սա իւր եզները լծից արձակեց.

Ազատ շրջելու իրաւունք տուեց:

Ասաց, « Ճող նոքա քիչ հանգիստ մնան,

Ազատուին լծից, որ պարարտանան,

Մինչև որ մենք էլ արտերը հնձենք

Եւ կրկին նորանց լծի տակ բերենք: »

« Եմ սիրելի կին, ասաց գիւղացին,

Երիկունը մեր մանգաղ, գերանդին

Սրէ, պատրաստէ, որ ես էն զլիէն

Մեր Քէտ արտի հունձը սկսեմ»:

« Նորա հասկերը, ոսկու պէս փայլուն,

Վաղուց են հասել, հնձող են կանչում.

Մեզ որ օգնելու ուրիշ ոք չկայ,

Այդ հունձը միայն ինձ ու քեզ մնայ:

Կինն իսկոյն վազեց, պատից վայր բերեց

Երկու հատ մանգաղ, սրեց, պատրաստեց.

« Աչա ամեն ինչ, ասաց, պատրաստ է:

Վաղը մեր բազկի ուժերը փորձենք: »

Եւ երբ լուսացաւ, գիւղացին առաւ

Եւր սուր մանգաղն ու արտը գնաց.

Եսկ կինը տան գործերը վերջացրեց,

Առաւ ուժելիք, դէպ արտ շտապեց:

Սրի գիւղացին արտի մէջ մտած,

Ու նոր զօրութիւն, նոր ոյժ զգեցած,

Եւր սուր մանգաղն աջ ու ձախ կծգէր,

Հնձած որաներ խուրձ խուրձ կկապէր:

Յանկարծ նա լսեց, — « բարի աշխատես,  
 իմ սիրելի մարդ, չերիք է չնձես.  
 Դիտեմ գաղրած ես, մի փոքր նստիր,  
 Քիչ հաց ու պանիր հանգիստ վայելի՛ր:  
 Խռնջած զիւղացին շատ ուրախացաւ,  
 Երբ իւր ամսւսնցին նա իւր մօտ տեսաւ.  
 Զեռքով ճակատից քրտինքը սրբեց,  
 Փայլուն մանգաղը ձեռքից վայր գրեց:  
 • Դէ՛չ, հիմայ ես քիչ մի հանգստանամ  
 Դու քո մանգաղը առ, իմ սիրական,  
 Ինչպէս դու վարժ ես քո տան գործերում,  
 Նոյնպէս վարժ ես և մանգաղ շարժելում:  
 Գեղջուկ քաջուհին սիրով ձեռն առաւ  
 Կտրուկ մանգաղը, արտի մէջ մուաւ,  
 • — Դիւղացու աղջիկ, զիւղացու կին եմ,  
 Իմ աղքատ մարդին ես սիրով կօգնեմ:  
 • Թող ես մարդիս հետ լինիմ աշխատած,  
 Որ նորա հետ էլ ուտեմ հալալ հաց,  
 Հայրս ու մայրս ինձ միշտ կասէին,  
 Սիրելի աղջիկ, կօգնես քո մարդին:  
 • Փափկակեցութիւն մեզ չեն հարկաւոր,  
 Կամ շքեղ տներում նստել փառաւոր

.

.

.

• Ա. Յ. թէ պարզ սրտով մեր մարդին սիրել  
 Եւ մեր քլենու նորան ճանաչել,  
 Մասնակից լինել իր աշխատանքին  
 Սիրով բնակուիլ, փառք տալ Արարէին:

Այսպէս մարդ ու կին իրար օգնեցին  
 Եւ ամբողջ օրը արտը չնձեցին.  
 Եւ երեկոյեան դառնալով դէպ տուն  
 Տուին Արարէին փառք և գոհութիւն:

Ա՛՛ թէ Հայ աղջի ամեն ամուսինք  
 Միշտ ու ամեն տեղ այսպէս լինէին,  
 Եւ իւրեանց տղայ ու աղջիկ որդւոց  
 Աշխատութեան մէջ այսպէս կրթէին,  
 Դառն աղքատութիւն չեռու կը փախչէր,  
 Ոչ կագ, ոչ կոիւ, մեղ կը հանգիպէր:

Գրալար ներսէս Ա. Տ. Ա. կայի կանց.